Էս մարդն ըսեց ուր խոր.—Էորան տաբի էն մարդիկ մեքի լավութուն ևրին, ես կեթամ լավ պալտոմ՝ էդ մարդու խամար կառնիմ, լավ դեյր, շալ կնդտն կառնեմ. օստմաման ու շոր աղջկտն կառնեմ, ֆայտոն կտանենք, բնոնց բերենք մեր տուն պտտիլ:

Ըլմալ էլ ևրին, րերին խալաթեցին, տղեն դնաց րերեց, պատրաստեց:

Մարդն տաց.—Ա՛յ մարդ, —ըսեց,—հորի՛ ա դու ծախսի տակ կմտիս:

Հեկան իրերով ևկտն էս մարդի տուն, կերտն, խմեցին, էս մարթ րերեց խալոթնի դրեց ևղանց հառեջ: Էս մարդիկ դարմացան, առան, հեկան ևկտն հուրանց տուն, հրդան մարթի տակ:

— Էս աղեն լավ աղա յա, շուր մեռնի՛ խաց շմուրա, պտի մեր աղջիկ տանք րատն:

Հեկան էկան տղի տուն:

Ըսեց.—Հեկի ևրթանք, մեր կոնախն ևր:

Հեկան էկան, լավ սեղտն էր պատրաստե, բեթ ևրին:

Աղջկտ խերն ըսեց.—Իմ աղջիկ աղապ է, մենք կցանկանանք իմ աղջիկ տանք րու աղին:

Համաձայնվան, խարս րերին, նշանին: Էկտն տուլով, դուռնով տոտն դացին:

Մենք խաբար հո՛ւտտ տոնինք, խարապ սունինք ախպոր մոտեն:

Էն օրի հրդան մտն էլ սատկավ, դուրանն էլ փտկվավ, էս խետ տկուղ, բորիկ, էն տեղ խասավ.—Ո՛ւր էրթանք,—ըսին:

Տղեն դուքներ րերե յցե ապրանք, տոտուտուր ա կենա:

Էս մարդ պտոտելով էկավ ուր տխպուր քա-

դար, ձմերուկն օր կերած թալած, կվերցի կկրծա, հրնդև ուլիցի խեաւ էն օր հինքն էր՝ ախոյոր-ճանչալով, էն օր ախալերն էր՝ հո՛ւստ ճանչնար, իսկն էլ ջոջցեր աւ:

Ձնն ալկեց.—Ո՛հ, ախքատ, արի էստեղ, էկալ:

Ըսեց.—էս հո՛րի էդ կոճոններ կվերցուաւ:

Ըսեց.—Նաչաւու հմ:

Ըսեց.—էդ իմալ աղքատ էս, օր ջվալ էս քցե
րու վիզ:

Ըջերու մեկին կանչեց, փող ալկեց, ըսեց.—
Ըստուր կոտանեք բողոնիս, լալ քիսա կեղաք դա-
նել, աանեք պախրիմախրի մոա կթրաշեք, շորեք
հրմեն կփոխեք, կիւարուկ ու կտոնեք կդաք:

Ինչ որ խաղեն ըսեր էր՝ Լրեց ու առաւ է-
կալ, հանձնեց ախոյոր:

Մե ոթաղ տարաւ, ըսեց.—Պալուն օր կերա-
կուրներ կեփա, բնձի կոնախ ունիմ, առաւոտ էս
ճաշն կտանես, հրկուսն՝ էո, ճաշին՝ էս: Ջլերն էլ
առաւոտից ու դումաշից քցի:

էս սրան առաւ, հրմեն ինչ աղեց, մեկ ամիս
ախոյորն պախեց, էն մեկն էլալ ալալալ ախալեա
էն մեկն օրն խորն ըսեց.—Մենք դոնախ ունենք,
հիւի դնա խլաւ էնոր դոա Լրա, մինչև դսմ:

Խեր օր մտաւ օթաղ, խեր ողին ճանչալով,
աղեն խոր, լացին, փաթթվան իրար, խարս աե-
սալ.—Վա՛յ,—ըսեց,—էս ի՞նչ ա էլի:

Մարդը կկալ, կնիկն ըսեց.—Մա՛րդ, օյին
էկե մեր զլիխն,—քո խեր ու մեր կոնախ փա-
թթվան հիրար, հիրար քիթ ու բերան ա կկրծին:
Ըսեց.—Յա՛ւ:

Մտաւ, նոր հինքն էլ խառաւ ախոյոր: Փող
ալկեց խոր, ախոյոր ըսեց.—Կերթաւ իմ խարս,
իմ ճվեր կխաքուտ, կոտնիս դուպաս:

Դնաց, բերեց առն:

Հրմեն կանչեց քեֆի, պոքաք, աներ հեւան
էկան, քեֆ Լրին:

Մեկ կարճ ժամանակ հետո, իր աներ ալկեց
ախոյորն, հինքն պնաց տներոջ ստուն: Նստան էն-
անդ ուրանց դովաթ վայելցին: Վայելն՝ ձեր
որդիք:

25(34). ԱՂԲԱՏ ՄԱՐԻՇ

Շաա վաղ ժամանակով մի աղքատ մարդ ա
հչնում, ունենում ա մի կին, էրկու աղա. էդոնց
դրութուն շաա ծանր կլի: Ըստիպված մարդ զլի
սր էթա օտարություն: Մարախաան զլի կեթա ճա-
նապարհ, շաա կեթա, քիչ կեթա, կհնցի աշխրե-
աշխար, կհասնի մե խաղենի, կպաամա հուր
դրութունը:

Խաղեն կասա.—Ես աաս աարով կընդունեմ:

Տարի խարիր մանեթ պայմանագիր կկնքա.
մարդն կվերցու խինգ խարիր մանեթ. կուղարկա
հրանց դեղ, ժամանակ Լրո կլրանա, գուքյա
կասա.

— Խաղեն ջան, իմ ժամանակ լրացեր ա,
մունեթ կէնեմ՝ իմ հաշիվ փակես, ես էթամ:

Խաղեն կըսա.—Շաա լալ, նսախ խաց կե,
խաղենի կնիկ դյաթա կշաղա, կսղեն թխեն,
խաղեն կասա.

— Վայ կնիկ, հիւի դյնա հարեանից էս ինչ
բանը բեր:

Կնիկ զլի կեթա, խաղենը կըրա, հիրա
սնտուկ կրացա, մե քիչ օսկի կլցա գյաթի գնախ
մեջ, կշանա թունդրա կող, կնիկ դուքյա, կասա.

— Իյ մա՛րդ, էդ ի՞նչ ա կէնես:

Կասա.—Չոր դու կկա՛ր՝ մե դյաթա էլ իմ
կողմից թող հընի նվեր:

Խաղեն կէթա, կնիկ գյաթեն կպուա, կոե-
նա օսկին. մե դյաթի մեջ մե կուց օսկի էլ հինքն
կլցա, կլուա թունդրան կող: Կնիկն կպրծնի, մե
խուրջին կըրեն, թե թայ ճամբու խաց, մե թա-
լըն էլ էրեխերի համար կլցեն, օր տունա տուն:
Ու կպարաավորցուն, օր էս էրկու դյաթեն նվեր
կտաա քո աղերքին. փողն էլ կաա, ճամբու կը-
դնա: Մե ձի, մե հրացան, մե յափուռի կաա,
կհնդի ճամբա, մե բանի մետր հլա չի հեռացե,
խաղեն կկանչա.

— Հլա դարձի՛, բան ասեմ:

Կղառնա կղա, կառա.—Ինձ,—կասա,—խա-
րիր մանեթ առ, քե մե խելոք բան տեսմ:

Խանա կաա. խաղեն կըսա.—Ինչ կլի կլի, դու
քու դուղ ջաղդեն շոռես, զե՛ տեր խըա քեղի, դնա՛:

էս մարթ կեթա կմտածա, որ խարիր մանեթ
խափեց առաւ: Հլա մե հարիր մետր շհեռացե, նո-
րից կկանչա, կասա.—Խարիր մանեթ տո՛ւ, քեղ
մե խելոք բան էլ ասեմ:

Կառնի, կասա.—Ինչ օր կլի, կլի, ուրիշի
գործերուն շխառնվես:

էլի կեթա, կմաածա.—Խարիր մանեթ էլ տա-
րալ:

Մեկ էլ կկանչա, խարիր մանեթ էլ կառնի,
կասա.—Ինչ կանաս, համփերա:

Կեթա էլի կմաածա.—Իրեք խարիր մանեթ
ստալ:

Կեթա, մեջի կխաախ, կանսնա մարդիկ են
դալիս, ասում են.—Ղաղաղներ կան, թեքվենք էս
ջաղդից: Ժողովուրդ կօլովի հուրիշ ջաղդով, էսի
կհիշա հուր խաղենի խոսքերը, հուր ջաղդով
կեթա. դուղ ջաղդով մեջից զլի դուա, կնսախ կհան-
գըսաանա, կանա էն մարդիկ թալանված էկան,
բսին.—էդ ասողներ հենց դաղներ են, մեզ խա-
փին, աարան էդ ջաղդով, թալին:

կգա, կգա, կհասի մի գյուղ, կեթտ մի խաղ-
ղենի մոտ կքնի: Կտենա մե կնիկ կա, արարու
գլոխ կախած վղից՝ շոքով ա, շունն հեղե ջերու
վրեն, գլոխ գրե վրո բարձին, էս ի՞նչ բան ա,—
կմտածա, կհիշա հուր խաղենի խոսքեր, օր
հուրիշի գործին լսառնվես: Իմ ի՞նչ գործն ա,
հուրանք գինան: Տեսավ՝ մե օշխրի ջանդակ էլ ա
կախուկ, խաղենին էլ կկանչա ծառային թե.—
Մե օշխար մորթա:

Կգարմանա, համա ձեն լխանա:
Օշխարը կտորթե, կերխում կանեն, կքեն,
ստրախտան գլի, օր էթա, խաղենը կըսա.— Բա
դու ինչի՞ լխարցուցիր, էս ի՞նչ ա կտեսնես:

— Է՛, ախպե՛ր ջան, էգ քյո գործն ա, իմ
ի՞նչ դործն ա:

Կասա.— Արի գնանք մարաք:
Կեթան կտենա՝ լիք մարդու ջանգակ, կասա.
— Կտեսնա՞ս էսոնց, էսոնք քյո նման կոնախ ա է-
կած. էկել են, առել են. Ա՛յ մարգ, էս ի՞նչ ա, էն
ինչ ա, ես էլ հրմնուն մորթեր եմ: Դու օր իմ
դործին լսառնվար, էսոնց հարստությունից քեղ
էլ կտամ: Դու լավ մարդ ես:

Կգա, կգա հուր խաղենից շատ շնորհակալ,
կխտսնի իրենց տուն: Մութ տվեր ա, կտենա, էր-
կու խստ ջահել տղա, մեկ էլ կնիկն կախվեր են
թունդիր, կազավին: Մոռացեր ա, օր տղաներ քը-
սան-քսանխինգ տարեկան են հեղե, հրացան կը-
խանա, օր էտոնց խիա, մեկ էլ կհիշա խաղենի
խոսքերը. «Ի՛նչ կաննաս, համիբերա»:

Չըկրակա, մեկ էլ կլսա օր՝ աղեն կասա
«մամա»:

— Վտ՛յ, էս իմ տղերն են:
Կուտամուտ կծծտ, կմտնի ներս, կըսա.—
խորշին բաղ՛ք:

Կրերեն կրացեն, դաթեք կտա տղերքին, կը-
կիսեն, կուտեն, ոսկին միջից կթափվի:

26(35). ԱԽԱԿԵՐ ԹՈՒՄՈ

— Կուղեմ էթամ Ստամբուլ:

— Վտ՛յ, մի՛ գնա, Ախպեր Թումո, մի՛ գնա.
աե՛ս, ինչ էկավ իմ գլխին: Ես էլ կուզի էթի, հմա
ես մացի մի տախտկի, ծովն ընձի վերցեց ու
տարավ, իրեք օր ընձի պտուցուց, իրեք օրից
հետո տարավ քցեց ծովու կրաղ: Իմ աշխատած
օսկին մե տոպրակ էր, դրի վեճ էղ տախտկին, հե-
լա՛ էգ ծովու քնարի խեա մե մեծ պալ կա, ոչ կտ-
նամ հլնեմ, ոչ բան, մացի լալով, մոմալով: Մե
խատ խտնչալ կար վրես, քաշի էգ խտնչալ, էղ
պալի հերես ծալի, օտուց տեղ շիթեցի, բարձրա-
ցա հեղա գլուխ: Հեղա գլուխ, տեսա՝ մե խատ
քաղաք ա, մեծ քաղաք. էղ քաղաքի նե պտտի,
ոչ մե հաա ընակիչ չկա, բոլոր խտնութենք լիքը,

համա ընակիչ չկա: Գնացի. գնացի՝ տեսա գետ-
նի տկից ծուխ ա կրարձրանա, քանգեցի մտա նե,
տեսա մե հատ աղջիկ նստուկ ա էնտեղ:

— Ախչի՛, էս ի՞նչ բան ա, էս գետնի տակ
դու ի՞նչ գործ ունես:

Բա.— Մեր քաղաքի վիշապն բոլորին կուլ
ա տվե, ես թնգավորի աղջիկն եմ. իմ խեր գետ-
նի տակ շինություն սարքեց, ես ըստեղ ա կապ-
րեմ:

(Ախպեր Թումո՛, դու հանդաճ էրա տես, էն
ցավերն եմ տեսե, օր սիվտկեր եմ. դու արի ընձի
հանգստ էրա, Ստամբուլ մի գնա,— ըսեց):

Մացի էգ ախճկա կուշու, սամուսնացա, յոթ-
ութ տարի ապրանք, մեղի էրկու երեսա հեղալ՝
մե աղա, մե տղիկ: Էն մե օր ես տղի ձեռն եմ
բռնե, իմ կնիկ աղջկա ձեռն ա բռնե, գացինք
պալի կուշու. ծովուն ա թամաշա կենենք, հան-
կարծ աշկա տոավ տախտկին, օր իմ օսկին էղ
տախտկինն էր:

Ըսեցի.— Կնի՛կ, պտի հիճիմ էթամ իմ տշ-
խատանք բերեմ, շթողեմ կիտ խետ ջրուն:

Կնիկս ըսեց.— Չէ՛, մի գնա, էս քաղաք քե
չրավարարա՞, մի՛ գնա:

— Չէ՛,— ըսի.— պտի էթամ:

Հիջա, ոտներս դրի հիջա, դացի խոսա սախ-
տրկի մոտ, ոտս դրի վրո տախտկին, պետր տ իմ
տորրակն վերցեմ. շրիդն փթեց էր մըջ ջրուն, ութ
տարի ա տնցե, շրիդ կտրավ, տախտակն ընձի
քաշեց ու տարավ մըջ ծովուն: Տարավ մըջ ծո-
վուն, ես էգանդնա գիլամ, կինս էնտեղ դուլա,
ծամերն ս կիտա (Ախպեր Թումո՛, դու հանդաճ
էրա): Ծովն ընձի վերցեց տարավ, տարավ ու
տարավ: Գացի իրեք օր էգ տախտակն ընձի պը-
տուցուց, էն մե օր քեշեց տարավ մե կողմից
դուս տվեց: Հեղա դուս, տախտակ կալի, օսկին
թողի վրեն, մե հեռու քաղաք կերեեր, դեմ էրի
էղ քաղաքն ու գնացի: Խաաա քաղաք՝ էլի ըղմալ
ընակիչ չկա, էգ քաղաքն էլ ա վիշապն տվերե,
էս յան պտտի, էն յան պտտի, դացի մտա խա-
նութենք, սիրտս կմոմա իմ կնգա, էրեւերեն-
րուն խամա: Գացի մտա մե խանութ, աեսա՝
մե լավ ըլուկ կա, ես էլ շորան շատ եմ հեղե,
վերցեցի ըլուկ, ըսկսեցի փշել: Տեսա՝ իրեք խատ
փտրի զոռալեն էկան հիջտն իմ դեմ, բրկեկեն
շապիկներ խտնին, էղան իրեք խատ աղջիկ, ըս-
կըսեցին պտրել: Ես փշի, նրանք պարին, էկան
ընձի մոտս, ձեռ թալի էն մեկին բռնի, էն էր-
կուն փտխան, հուրանց շապիկներ խտրան ու
գնացին: Էտրտն բռնեցի, շապիկը պտի, նորից
էղրա իտա մոմանացա: Վեց-յոթ տարի էլ կորա
խետ ապրա, էլման երկու երեսա հեղալ, էլի
գնացինք ծովու դուղ պտտեցու: Էլի պատայա էգ

տախտկին՝ իմ օսկին էլ վրեն, հիշա դացի օր բերւում, էլի յրիզ փառուկ էր, տախտակն ընծի վերցնեց զրու վրեն, աւարով ու աւարով, խտնեց կտնալ. աւար, օշխար կարածան: Դեմ էրի էդ դոլին, դադի տեսա մե խառ մարդ, շոքեր բշաե, էրկու հառ թաղի լծե, շորոյ վար ա կէնա:

— Բարե, ախպեր:

— Վա՛յ,— ըսեց,— խաղար րարի, Թումո՛:

— Ախպեր, գու ի՞նչ դիտես, որ իմ անուն Թումո յաւ:

— Իս Ոկոսն հեղիմ, շղինա՛մ օր դու Թումոն էս.— Դո՛ր ա կեթաս:

— Անաւր, տնաիրական կպտոտեմ:

— Ախպեր Թումո՛, կեթաս մեր տուն, ես հիրկուն դիրամ՝ բե կկարդեմ:

— Ա՛յ մարդ, ես պարիբ, անաւր մարդ եմ:

— Չէ՛, անաւրման ուսի էթաս մեր տուն: Հելալ դացի զեղի մեջ, մաա աուն, բարե տվի, կնիկ մոսես առաւ, բերեց խաց տվեց, կերա, նստա մինչե հիրկուն:

Ոկոսն էկավ ըսեց.— Քեղի կարգեմ, ախպեր Թումո:

Հելալ զնուց, ախպեր ճարեց, կարդեց, տուն աղեց, մնացի, հելա էդ զտուղացի, սկսեցի ապրել: Աշխատա, էդ զեղի մեջ ապրա, էդ զեղի շայրաթն ինչ ա, զինա՛ւ. օր կնիկ մահանա, մարդն կաանեն իւսա, կհիշուն, օր մարդն մահանա՝ կնիկ կտանեն իւսա, կհիշուն: Մնաց մի առ ժամանակ՝ իմ կնիկ մնաւ: Է՛հ, օրենք ա, բերեցին ինձ էլ կնուս իւսա թաղին, իմ ուղարն իմ իւսա, դտաւեն հիշա դացի զեղին տուկ, օր ուղ մեռել տ: Վա՛յ լըմն, էս զեղին աակ ես իմա՛լ պոի ապրի, մացի էդաեղ մոմաղլով: Կերա էն պաշարն մի ամիս, երկու, պաշարն վերջացավ, անթոթութուն ինձի հաղթեա ա, հա՛, հա՛՝ մեռնելու եմ: Էն մե օր անաւ՝ վերեից իոսելու ձեն ա կիզաւ: Հա՛, ըսի, մարդ ա մեռե: Բերին հիշուցին, կնիկ ուղ հիշուցին. թաղավորի աղեն մեռե, կնիկ հիշուցին, արի տե՛ ինչ ուղար ա պած հեա: Սկսեցի էդաեղ լավ ապրել, խարսի հեա ուսակվանք: Մնաց, օրերից մի օր էդ կնիկն էլ մեռավ, մացի մեռակ, շաա առնջվա: (Ախպեր Թումո, շաա տանջվա, դու արի ընծի լսա, Ըսաամբոլ մի դընա, ես դացեա եմ, էդ ցավեք անսեր եմ): Մնաց մի առ ժամանակ, մի օր դիշեր էդ մեռելներ հա կցածրանան, կհիշին դեռնի աակ, ես էլ խեաներ, կհիշին, մեկ էլ անա, գտաւեն դացի անդունդ, մեռելներ կթափին դեա, պաի ես էլ հընդի, իմ կնիկ փարին, առաւ ընծի հուր թեւերին, խանեց դեց շոր, ըսեց.— Իմ լավութուն էսի թըխ հըլնի, հելի դնա, ապրի. ես կերթամ իմ աղվերամի խես:

Պառկա քնա, քունս առա, հելա անաւ՝ ոչինչ

չկա, ամայի երկիր ա: Դնացի, դնացի անաւ մե խաա վայրենի թափաղոյոք-քալլաղոյոք՝ մե խաա ծառ բլորախան էր, դրե վըր ուսին, մե ճղից՝ զել, մեկից՝ արջ ու դաղան ա կախե ու դուքա: Էկավ ծառն շարժեց, ես հընդա, իմ օաներ-ձեռներ կապեց, թալեց մե ճղի վրեն, դրեց վըր թեին ու էկավ խասավ հուր ընակարան: Դուր բացեց, էդ ջանավարներին լուկեց, խորովեց, կերավ ու վըր քամկին պառկավ ու քնավ: Առավոտ լուս բացվաւ, հելավ, իրեք խողի էլ էդաեղ դրել ա մանդալեն. ինձ էլ դրեց մանդալեն. էն մեկին օջախի վրեն խորովեց, բերեց կերավ: Գնաց, հիրկուն էկավ, շիջ խթեց վըր օռուց՝ բերնից հելավ, էն մեկ խորովեց կերավ, վըր քամկին պառկավ, քնավ: Մնաց, էն մյուս օր մնացի ես մեռակ. ըսեցի՝ հիրկուն էկավ, ընծի կուտա: Ի՞նչ էնեմ, քաշեցի օտա խանի, բայց ձիթի ջար ավե դուտն դեմ, քառուն մարդ չկանա հիրար աա, չըկանամ դուրս դամ: Ի՞նչ միջոց գտնեմ. մե աաս տորխինդ խաա օշխար ուներ, մե խաա էլ ների կա մեծ կոտորներով: Հելա դացի էդ ներին մորթի, տիկ խանի, մտա մըջ էդ տկին, օշխար խեա կպառաեմ: Թափաղոյոք հելավ տեսա՛լ չկամ, ըսեց.— Ցավալ քե ըռնեմ, օրական մե թիքա ուտեմ: Է՛հ հա՛, չմոռնամ ըսեմ, քնուկ անդ հաշկն խաներ եմ, փշացրեր եմ: Էկավ մաավ մըջ օշխարին, չգտավ, էկավ ձիթի ջար ավեց դեն, մածեց, թուեց դուս, նորից դուս փակեց: Օր փակեց ըսի.

— Թափաղոյո՛ք, ես քո ըսեց-ընեցը, ես աղի մեջ ի, փախա՛ւ:

Թափաղոյոք կսկծու. թոավ ելավ վեր, ափավ դեռին ու սատկավ: Ես հելա ու դացի: Գացի մե անդ անաւ մե խաա ձիավոր դուլլի նման դուքա: Էկավ խասավ.— Բարե:

— Աստու րարին:

— Ախպեր, ըսկի օշխար շոքեմ ես. ինձ արսիինդ օշխար, մե խաա ների քալլաղոյոք տարել ա:

Տեղն ըսեցի, պաամեցի:

Ըսեց.— Ես Իմանի Զիլախն եմ, կեթաս մեր տուն, շուր ես իդամ,

Գացի աուն, նստա, կնիկն էկավ, մե խաա խաանի շոր կոա կախուկ ա վղից, մե խաա ըիձա էլ կապուկ ա սնից՝ մե սլա խաց դիլին ա դուրկ, մի սլա խաց էլ հառեցն ա դուրկ: Գնացի ըդրանց զոմ, անաւ՝ քառսուն-հիցուն խավի մե օդ կդուրկ, մե օան ա թողուկ:

— Խաց կերեր ե՛ս, ախպեր:

Ըսի.— Ա՛յ մարդ, քո խաց կուտվի օր ուտեմ,

— Ընչի՞, ախպեր:

— Բա՛ էս կնիկ ի՞նչ մեղաց տեր ա, օր իսնի շոր կոա կախեր ես վղից:

— Է՛, ախպեր Թումո՛, օր պատմեմ դու ըն-
ծի մեղադրեալ է՞ր իմ կնիկն ա. էսի իմ ձիարած
սեյիսի խեա սիրողությունն կէնեք: Ըսեցի կայնի՛.
րեւեցի է՞ր սեյիսին սպանի, կոտ շորցուցի, կախի
վրեն, օր իշկա վրեն, խավես խանաւ էս բիձեն օր
կապուկ ա սնուց, իմ խերն ա, իմ խաց երկիր կու-
տեն, կեթեր հարեանի տնից խաց կուզեր: Մկա
կապեր եմ սնից, մե սլա դրեր եմ դլխուն, մեկ՝
հառեց, օր հառեցին սւտա, դլխի վրին կհիշու կու-
տաւ: Է՞ր խավերի օտր կտրեր եմ, որովհեանց ցո-
րեն կլցեմ հառեց հուրանց՝ շուան, կեթան հուրի-
շի բոստենի, ընձի կքրֆեն, օաները կարեր եմ,
ցորեն լցեր եմ առաջ, ուտեն, ընձի խավկիթ ա-
ծան:

— Լալ ես էրե, բա՛:

Նստան, խաց կերան:

Ախպեր Թումո՛, տեսա՞ր իմ դլխի էկած, արի՛
դու Ստամբուլ մի, դնա՛:

Ըամալ էլ էրեց, չդնաց: Չար դնաց հնդի,
բարին վըր ձեպի:

27(36). ԱԽՊԵՐ ԹՈՒՄՈՆ

Ժամանակով մի մարդ դլի, ծանր բնանիքի
տեր. կտենա օր ղժար ա ապրել, կստա կնդան.—
էս էրեխեքին յուլա տտր, ես էթամ աշխարհ-աշ-
խարհ ֆայլություն անեմ, փող աշխատեմ:

Կնիկ դլին մե էրկու խատ դյարե խաց կթրա,
կդնա մարդու խեա, մարդ կթթա, կհասնի մի քա-
ղաք:

Ման կդա, արե կմանի, կեթա մե դուռ կափա:
Կրնդունին, կիտսան դեսից-դենից, խաց կդնեն
կստեն, էսի կըտենա՝ վեց խաա ջահել քեֆ կա-
նեն, էս ծեր մարդ էտունց հառեց կծառայաւ Կա-
սա.—Ախպեր՛ ջան, խաց կե:

Կասա.—Ձեր խաց ուտելու չէ, ասեք տենամ,
ինչի՛ համար դուք ջահել տղաներ, դուք նստած
եք, էս ծեր մարդը ձեպի կծառայաւ, էսի մեղք չէ՞,
օր կաանջեք:

Ծերը մոռեցավ, ասաց.—Ախպեր՛ ջան, ա-
նունդ ի՞նչ ա:

— Իմ անուն Թումո յա:

Ասաց.—Թումո՛ ջան, դու խաց կե պրծի, ես
իմ դլխու դյալած քե պաամեմ, դու աես:

— Չէ՛, չեմ ուտե, մինչե շասես՝ չեմ ուտե:

— Դու խաց կե, պրծի, ես կպատմեմ:

Խաց կերան վերջացուցին, էն մյուս ջահել
ախպրներ դյացին քնելու:

— Արի, ախպեր Թումո՛, ես քե պատմեմ
իմ դլխու դյալած, դու դո՞ր ա կեթաս:

— Ես կեթամ ֆայլության:

— Եթե դու ընձի կլես, դու արի մի՛ դյնա

ֆայլության. ես կպատմեմ դու լսի. դու տենաս
մեր ապրուստ, մենք հարուստ ենք, էս իմ վեց
ախպեր ինչ էրին, չկրցան իմ վրեն, ես հելա
դյացի ֆայլության: Մենք իրեք հնդյեր ինք. դյնա-
ցինք աշխարհ-աշխար. մի քաղաք հանդիպանք:
Աշխատեցինք մե էրկու-իրեք աարի. բավականին
ոսկի ստեղծեցինք, ու որոշինք տուն դառնալ:
Հելանք էկանք, նստանք մի լոտկա, էկանք հա-
սանք ծովու մեջահղ, մե փոթորիկ բռնեց. մեղի
փոխադեն բերա ափ, տարալ հեռու. հելանք մի
քաղաք՝ լի առատ խանութներով, բայց ոչ մի մարդ
չկա, տներ դատարկ, վա՛յ վավելեր, ա՛յ մարդ,
էս ի՞նչ բան ա:

Չում հիրկուն ման էկանք, հիրկուն դյնա-
ցինք մե աուն քյանք, առավոտ վեր կեցանք տե-
սանք՝ մեր մի հնդյեր չկա: Վա՛յ վավելեր, վա-
վելեր, էս ի՞նչ օյին էր էկալ մեր դլխու: Ախպեր
Թումո, դու լալ լսի. օր չեթաս ֆայլություն: Հե-
լանք էս յան ման էկանք, էն յան ման էկանք, մեր
հնդեր չդտյանք: Գյացինք մտանք մե պայեռտ,
լիբր կտոր, հրմա փղուկ ա, վա՛յ վավելեր, վա-
վելեր: Հողնանք, հիրկուն էկանք քյանք: Հա-
ռավոտ հելա տեսա՝ իմ մի հնդերն էլ չկա, մաղեր
եմ ես մենակ: Չում իրկուն ինչքյան շուռ կկա
իմ հնդերոջ, չդտա, հիրկուն դյացի մի հուրիշ
տուն քնեմ: Մե ձեռս կտրի, աղ լցի, օր չքնեմ, մե
խանչալ քյաշի դրի կողքս, սպասեցի: Ապստեցի,
մեկ էլ հերթից նայեցի աեսա, տեսա՝ մե վի-
շապ լեղուն պարզեց, որ ընձի աանա. բրթեցի է՞ր
վիշապ, էտոր արուն դեա հելալ դյնաց: Լուս
բացվալ, հելա դյնացի, մե շուշաբանդ հանդիպաւ,
խանչալս լալի՝ շուշաբանդի մե յան քանդի, տե-
սա մի խեղեն աղջիկ դուս էկալ:

Առաց.—Իմ յոթ ախպրից ինչ խաբար:

— Էս քաղաք մարդ չկա, մե ճնջուղ էլ չկա,
յուրդդ քանդվի:

Վերջապես, մե էրկու օր մացի էդտեղ, է՞ր
աղջկա հետ ամուսնացա, մեղի մի աղջիկ ունե-
ցանք, էս աշխրքի հարստություն իմ աչք չի դա, էն
լողկի օսկին օր մնաց, իմ հաշկ մացե է՞ր օսկու
վրեն. կնդաս կասեմ, որ էթանք է՞ր օսկին բերենք:

— Հեսա քեղի ջվլներով օսկի կա, ինչի՞դ ա
հարկավոր:

Մեր աղջիկ հելալ իրեք տարեկան: Մի օր
հելանք դացինք ման դյալու, դյացինք խասանք
լողկին:

— Այ կնի՛կ, լա՛ աես, յավաշ հրնեմ էն օս-
կին բերեմ:

— Այ մարդ, դյործ չունես, քյո սոսալած,
չյործ չունես:

Չլաւ կնդաս, հելա ոտ թալի լոտկեն, մե
քիսկն բերի, մե ոտ էլ դրի՝ մեկն էլ բերի, է՞ր հրն-

դերներու օսկին էր. կայնի, ասի, հելեր եմ, հելեր
եմ, իմն էլ բերեմ: Մե ոս էլ թալի, դու մի օսի,
էդ յոսկեն փառուկ ա, լոտկեն փրխալ, ես մացի
մե տախտկին նստուկ, քյամին կայնալ ընծի
տարտուլ, իմ կնիկ, աղջիկ լալով մնացին, ես էլ
լալով կեթաւ, չեմ դինա դոր ա կեթամ:

Ախպեր Թումո, հանդաճ էրա, ընծի լսի, օր
չեթառ ֆայլութուն: Կերջապես տարալ, տարալ
աղխրհի մե ծերից խանեց. ահա՛ մե մարդ էրկու
շուն չժե, վար կէնա: Գյացի բարեւ տվի, ըսեց.—
Ռարս՝, խաղար բարի, ախպեր Թումո՛:

Ըսի.—Վա՛յ վալիլեր, վալիլեր, էս ինչ դի-
ներ, օր իմ անուն Թումո էր:

— Ախպեր Թումո՛, տրի դու մաճ բոնա՛ վար
երա, ես էթամ քիզի կնիկ ուզելու:

— Ա՛յ մաղդ,—ասի,—բալի ես չեմ կարողի:

— Չէ՛, բիզի կկարդեմ, իրիկուն դու չորոց
թողես չժան հեան, դու հնդի շներս հետե արի,
կտոնր դուքան, մեր դուռ կկայնեն:

— Շատ լավ:

Արեմտայ ա, բերի չորոցն անշատեցի, էկանք
խասանք մե դուռ: Էդ մարդ հելալ, ընծի աարալ
նկրս, ըսեց.—էսի քեզ կնիկ:

Տեսա մի կնիկ, ամաներ թուրած: Ընծի տվին
մե սենյակ, իմ կնդա խեա կապրենք, ֆայլութուն
կէնեմ:

Սի օր հիրիկուն ասաց.—Ախպեր Թումո՛,
դինաս ի՞նչ կա, մեր երկիր էսպես ա՛ մարդ մե-
ռալ կնիկ խեա կթաղենք, կնիկ մեռալ՝ մարդը
խեար սաղ-սաղ կթաղենք, էս բան հիմացի:

Վա՛յ վալիլեր, վալիլեր, ախպեր Թումո,
դու լալ լսի, որ դու չեթաս ֆայլութեն:

Էրկու ասորի հնցալ՝ իմ կնիկ մեռալ: Ուրին
մե քսան օրվա հոց թիւին, ճաշ դրին, ջուր դրին,
ինձ էլ խնոր թաղին. աարան խանին մե սարի
դրիս, քանդին ծակ բացին, խացն հիջուցին, ինծի
իջուցին, հետո էլ կնդան հիջուցին, ծակ փակին,
դնացին:

Անցալ մի քանի վախտ, տեսա էլի մեռել
հիջուցին, կնիկն սաղ ա: Մարդն դրինք էն յան,
էդ կնդա խեա սամուսնացա: Տեսա ձեն դուքա,
դու մի սուս, աղվսներ սար ծակած, դուքան ջան-
դրկներուց կուտեն:

Ասի.—Արի էտ ծակից դուրս գանք լուս աշ-
խարհ:

Սղվսներ էկան ջանդակ քյաշելու, ես ջանդակ
պոշտի, ես էլ հելա դուս, փակեցի ծակ ու յալա
փախա: Գյնացի, գյնացի՝ ահա մի սուրու օշ-
խար, գյացի խասա օշխրին, ահա մի քոռ քյա-
լադոդ ընծի բոնեց, թեքս կապեց, թալեց ծա-
ռի վրեն, ծառ խանեց դրեց ուսին աարալ: Տա-
րալ խասուց Ահերի դուռ, աարալ էրի մեջ, ըն-

անդ էլ էրկու խոքի կային, օշխարն էրեց ներս,
քյար տվեց հերի դեմ: Մառը ջարդեց. կրակ տը-
վեց փուռն, էն մեկին կարմրեցուց, կերալ, ջուր
խմեց, էկալ պառկալ ու քյնալ: Սոսվոտ վեր
կացալ, օշխար քյաշեց գյնաց: Էդ հնդերոջս խեա
ատմներով մեր կապեր բացինք, նստանք: Արեւն
առալ մտել, քյալադոդն էկալ, էն հնդերոջս խո-
րովեց, կերալ, քյնալ: Մտածեցի հլենմ Թամոյ
մորթեմ (օշխրի մերին ա). տիկ խանի, շիշը դա-
ղի, խթի հաշկը, քյոռուցի:

Բոռաց.—Հա՛յ, քե խոսխում կուտեմ:

Տիկը խյաքա, լուս բացվալ, հելալ էթելու.
դուսն մեջ կայնալ, ես որպես Թամո՛ հնցա փա-
խա, դոռուցի.—Քյոռ քյալադոդ, Թամոյ ես
մորթի, հաշկդ ես խանի, հելա դուս:

Էդ թոալ երկինք, հիջալ դեպին, պլթաց: Ախ-
պեր Թումո՛, դու լալ հանդաճ էրա, օր ինծի լսես,
չեթաս ֆայլութուն:

Փախա, մեկ էլ տեսա մե կապուա ձիալդը
հընդե իմ հեան. էկով, էկալ բարեեց,—դո՛ր ա
կեթաս.—Դու քյոռ քյալադոդի ի՞նչն ես:

— Ըսացի.—Ուրին էլ չեմ:

— Էն հառաջի սիւլաակ օշխարն ցանսնե՛ս,
էն օշխրներն իմն են:

— Ես սպանել եմ ընդուն:

— Օր ըմալ ա, դու նսաի իմ ձին, դնա մեր
տուն, Սուրաթան՝ Իմանի Չփլախի աուն:

Նստա, խեծա դյացի Սուրաթան, դաա Իմանի
Չփլախի տուն: Տեսա օր էդ աուն խալեր հըմեն
մե ունեն են, մե բիձա կապած սնին՝ խաց սղով
լիք, ջուրն կողի խետ, մե կնիկ էլ կա արաբի դը-
լոի վղից կախուկ ա: Սպասի շուր հիրիկուն, տե-
սա Իմանի Չփլախն էկալ: Նստանք սկսինք խո-
սել,—էս կնիկ իմ կնիկն ա, իմ կնիկ ինծի կթո-
ղեր, կեթեր արաբու խեա սիրող կէնեմ: Ես էլ նրա
դրիս կտրեր, կախեր եմ վղից: Էսա մարդ իմ
խերն ա, ես հարուսա մարդ եմ: Էս մարդ իմ հե-
լած չեւած կթողեր, կերթեր իւղի աուն, վոկիկ
կխմեր. էնաոնք էլ ընծի կանալալին, կըսին.—
Գեպին մտնես դու, քո խոր հընչի՛ չես պախի, օր
կդա մեր վոկներ կուաա:

Ես էլ կապեր եմ սնից, թող սաա, նսաի:
Տենաս մեր խալեր՝ մե ունեն են. մեր կուա կթո-
ղին, կեթին հարեանների խալերու կուա կու-
աին: Ես էլ հմնու ոտներ կարի, որ մնան մեր
դռանը:

— Թումո ախպեր, ես իմ կապուտ ձին կը-
րախշեմ քե, դու նսաի դնա ձեր դեղ:

Էդ մե ձին ալեց ինձ, նսաա էկա մեր դեղ:
Ես ըմալ ի ծերացեր ի՛ ոչ ոք չճանչցալ ինձ: Էս

1. Աղբրեջանական գյուղ Վարդենիսի շրջանում (ժ. 4.)

իմ ախպերներն՝ ճոշ ախպերներն են, ես պատիկն եմ, դու արի, իմ ճիւղն տես:

Ընծի տարաւ ղյում, ասաց.—Դու ընծի լսի, մի ղյնա ֆայլության, ես էլ էս ձին կտամ քեզ, դարձի ձեր ղեղ, ձին ծախսա բյո երեխերին պախա:

Ես լսա էդ մարդուն, դարձա էկա, կարողացա միջոց ստեղծել ապրել: Ասուց իրեք խնձոր՝ պտտմողին կհեղի, մնացածն էլ ու՛ր հտվանություն կտա, թող նրանք ուտեն էդ խնձոր:

28(37). ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Ավալ ժամտնակ էրկու ախպեր ղյնն, մեկը բյասիր, մեկն էլ հարուստ: Ձմեռ էդ բյասիր ախպերն ասաց.—Ախպեր՝ ջան, մուննտթ կէնեմ՝ ձին ասա, էթամ տշխատեմ:

Ախպեր տվեց, ասաց աա՛ր. իսկ ընդհանրապես սոսոված բյասիրի խելք կառնի հառեջ, նոր հետո ապրուստ: Բյասիր ձին տարավ մեշեն, մե խատ ծառի բյաթուկ կապեց ձիու պոչից, շատ էկավ, թե քիչ, հնդկավ մե փոսի մեջ, ձիու պոչ բյոբից կարավ, թողեց ըսե, էկավ ախպերն ասաց:

Ախպերն ասաց.—Դու իմ տուն բյանդեցիր: Բռնեց ղյոռոն տվեց դատարան: Էդ ժամանակ էլ դատարան հուրիշ ուսյոն էր, կանչեցին դատարան: Վեր կացան էրկու ախպերով դատարան էթալու, ղյացին խասան մե ուրիշ ուսյոն, մութ տվեց. դո՛ր էթան. ղյացին մե տերտերի տուն՝ հեղան կոնախ: Էդ տերտերի կինն էլ պաուկե, թաղա տղա յա բերե: Էն օր հարուստ ախպերն էր, բերին ճաշ տվին, կարգին հարգեցին, ինչ օր բյասիր ախպերն էր՝ խացի փշրանք, ժտմիկմաժիկ ղրին ըտոր հառեջ, կերավ: Տեղեւը թալին փոփ ղյոխ, ջոջ ախպերն էլ կարգին տեղաշոր բյցին, բյնան:

Պղղի ախպերն շատ մասածեց, արորվտվ, ղլորվավ հընդավ էրեխու օրոցին, էրեխեն մեռավ: Տերտերն էլ տվեց դատարան: Հասան մե մեծ կարմունջ, կարմունջի բարձրություն մոտ խարիր հիցուն մետր տ, ասաց.

— Էսպուց լավ բան չկա, յավա՛շ ընծի թալեմ էս կարմունջից, մեռնեմ, վերջանամ:

Դու մի ասա էդ դեղի ղլավու խեր հիվանդ ա, ղրտծ սել, կարմնջի տակով կտտենն: Էդ մարդ թոնելու բաշան՝ հընդավ էդ մարդու վրեն, էսի մեռավ: Էդ էլ հուր դործ տվտվ դաաարան: Ախրատր մտածեց, օր հուրին կզնդակահարեն, ճամփուց մի հատ կլոր ջոջ բյար դաավ, դրեց մե շորի մեջ, ղանեց ղոլթուղ: Դատարան լսավ, էդ մարդը

բարը հանեց շորով ցույց տվեց. դատավորն հիմացավ օսկի յա, հաշկով էրեց. յանի պախա: Դատավոր լսավ բոլոր ղործերը, ասաց.—Ձին մնա էս մարդու մոտ. շուր պո: բուսի (այսինքն ձին մնաց բյասիրն):

Տերտերը դործ լսավ. ասեց.—Թող էթա. քնի տիրութնու կուշտ, շուր աղա հեղի:

Ռեսի տղեն էլ ասաց.—Թող էս մարդ էթա կարմունջի տակ կայնի. դու կարմունջից քեզ թալ էտոր ղլիսի վրա, սպանա: Որոշում վերջնական ա:

Ռեսի տղեն տսաց.—Էս մի քսան օսկին կրտամ դրան, ես չեմ կանա կարմունջից ինձ թալեմ. բալթի չհնդա էդ մարդու վրա, հընդա գետին:

Ախպերն ասաց.—Էսա մե ճանդ օսկին ա՛ռ, իմ ձին տու, պոչն հո՛ւստ բուսի:

Տերտերն էլ ասաց.—Էս մի քիտուկ օսկին առ. ես նամուսի աեր մարդ եմ. էյ խալաւաւաւությունից վաղն արի:

Տվին էյ մարդուն:

Դատավորն կանչեց էյ մարդուն.—Արի տե՛նամ, ախպեր՝ ջան:

Ասաց.—Պարոն դատավոր, եթե դու ընծի որոշիր ղնդակահարություն, հուրիշ իլլաճ չկար. ես բյար դրեր ի ծոցս, պտի տի բյո ճայտի մեջ, ղանի բեղի սպանի:

Դատավորն ասաց.—Փա՛ռք քե սոսոված, օր ես փրկվեք եմ: Ա՛յ տղա, արի մի քիսիկ օսկի տամ քե, ղնա բյո կրեխեք պախա, յլ ես փրկվա:

Էս աղքատը հարստացավ, սկսեց լտվ տպրել: Չարն ընդե, բարին բոտե:

29(38). ՆՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Էն օր մեծ ախպերն ա, կարգված ա, էն օր փոքր տիպերն ա՛ տպր տ: Զոջ տիպեր տուն կկատավարա, պղտիկ ախպերն խոսաց վրեն.—Բու տուն ալոլի, դու կտանես մեր մալ կժտն կկորցուս, կիպա:

— Ախպեր՝, էսա մեկ եղն էլ դու կտանես ծախես:

Հեւավ աարավ մի քաղքի մեջ: Դու մի ասա՛ ըղտեղ իրեք ախպեր են, քոսսթեն կէնեն, պտուլ են, կժտն ապրտնք կտոնեն:

Էն օր մեկ քոսեն հտնդիպավ, բուց.—Ախպեր ջան, էն հորթիկ չծախե՞ս:—Իմա՛լ,—բսեց,—հորթիկ:

Բա էտի հորթիկ ա՛:

Չծախեց. առաջ անցավ: Էն մեկել տիպերն բսեց.—Էտ կովը չծախե՞ս:—Իմալ,—բսեց,—կո՛ւլ ա:

Էն մեկել պղղիկ տիպերն բսեց.—Ախպեր, էդ էծ չծախե՞ս:

Ի՛նչ, է՞դ մարդու խելքն առան. էժան ավեց, Լկավ:

Ախպերն ըսեց.— Իմա՛լ ծախիր:

— Էժան:

Հելավ դնաց մեկ հարուստ մարդու մոտ խընդրվավ, ըսեց.— Ինձի մեկ խաա օսկի առուր, խինդ օրից ևզնա կրերեմ:

Էս մարդ մեկ խաա աասնոց օսկի ավեց, դրնաց մեկ քյավառու հանդիւլավ, որ մեկ խաա լավ էշ կծախաւ: Առավ Լկավ թաղա փախնով: Հելավ սարախտան էկավ:

Ջոջ քոսեն հելավ հառեց, ըսեց.— էշ ծախու յա՛ւ — Ի՛նչ ա դին:

— Երկու խաւիր օսկի:

— Հորի քու էշ օսկի յա կթրքա՛ւ:

— Այո՛ւ:

Ինաց ախպրոսցը կանչեց, շուր կզան, էս մարդ օսկին դրեց էշու ոռ, ևկան քոման վրեն: Էշին զանեց, էշ աղոնեց, օսկին օռնն թոսով, վերցին՝ օղորթ օր օսկի յա:

Ըսեց.— Այլադացի՛ր:

Ըսին.— Խա՛ւ:

Ի՛նչ մի ըսե օր էդոնք թաղավորի խաղինեն կողոնան կրերին: Տարան, շուտ խամբրին, էրկու խաւիր օսկին տվին, էշն սուսն: Բերին ջոջ ախպր առն, ըսեց.— Տարեք լավ յոնչա դրեք հառեք, կուշա ուղտ, նսր օռկին կիտա, ունսթի չիդա:

Բերին Լմա՛լ կերցուցին, էշ կանդլա, սուսն վարացն հընդան վրեն: Է՛, օսկին դոր՛ա կթրքա, օսկին չկա ինեւ.— Հելեք էրթանք, բռնենք տիրոջ սողաններ: Էշ ծախողը դնաց, աեսավ մոարներ աղվես ա բռնած, էրկու աղվես առավ, Լկավ առն: Էսի եղ Լլ առավ: Մե աղվես սարավ խեա, մեկն Լլ կաղեց սմարա: Էդ իրեք քոսեն դոնեն մասն, կնիկն ա տուն,— բարի լա՛ւս, քո մարդ հո՛ւր ա:

— Գացե վար կէնա: Դարի դլսին ա, մեռնիմ իմ աղվսուն, խսքնուկ ա, թե չէ՝ կճամբխի, կկանչի (հինք սովորցուցեր ա կնդան):

Ըսեց.— Աղվես ջան, դնա՛ւ:

Քաղրի շուր հընդան աղվսու հեան: Էդ մարդ խաաղեցավ, աղվես շլքեց, ևզներ ավեց հառեք էկան: Տեսան, աղվեսն, հավառացին:

— Ումուդ ջան, քու աղվես տաի աաա բնձի:

— Ա՛յ մարդ, իմ ձեռ ու ոտ իմ աղվեսն ա, ես իմա՛լ կիդամ:

Էրկու խաւիր օսկի ավին, առան:

— Ըսեց.— Սի՛ քեցուցեք, նեղուցուկ ա, դրկեք տարեք:

Առան աարան, հիրդուն մութ տվեց, ըսեց.— Ախպեր, մենք էրթանք մեշուկ զանենք, խաղինեն կլլնանք, աղվսուն դու ճամփա, առնենք դանք:

Էնտոնք գացին. աղվես թողեց. գնաց՝, գրնաց: Էս մարդիկ հելան Լկան,— տեսան՝ աղվես կուրիսուկ ա:

Էս մարդն էլ դնաց մեկ խաա եղան փուլիկ առավ, արուն լցեց, առավ էկավ, նխշուն դուդուկ մ՝ առավ, ըսեց.— Կնի՛կ, ես դինամ, էնդոնք մկա կիզան. օր դուքան, ես էս փուլիկ կկապեմ քո վրի լաշիկներու աակ. օր էկան, դու խաուլի հիւսուր, ես կերսոսեմ, քե կմորթեմ, դու խոխոա, հետո ես դուդուկ դնեմ քո օռուն, կիշեմ, դու թռի հելի նսաի:

Հմլա, հմլա էրեց:

— Ախպեր ջան, էդ դուդուկ ծախա մեղի:

Առան Լկան, աարան ջոջ ախպր կնդան մորթին, դուդուկ փիին. Ի՛նչ սաղնալ, Ի՛նչ բան: Հելան Լկան դոր մոս:

Սա փախավ, էդոնք հընդան հեանից:

— Հորի՛ ա կփախես,— մի հովիվ խարցուց:

— Մեր թաղավոր մեռե, էսոնք հնդած իմ հեան օր բռնեն, աանեն Լնեն թաղավոր, ես շուղեմ:

— Ա՛յ մարդ, արի դու հելի շորան, ինձի թխ սանեն:

Շորերը փոխին: Չորնին բռնին, կզանեն կըսուանեն: Հեառ դարձան Լկան շորնի կուշա, տեսան էդ մարդն ա, ըսին.— Յա՛, քե թալինք ջո՛ւր:

— Ձեր աուն սուբվի, պտի օրմ՝ էլ հառեք թալիք, խրեղեն թաղավոր ծովու սակ օլխար էր կցովեր, ավեց ինձ առա, Լկա:

— Դը՛ արի, մեղ էլ տար թալ ջուր:

Տարավ թալեց, սրկան, խեղդվան, պրծավ դրանցից:

30(39). ԱԼԵԲԱՆԻ ՀԵՔԻԱՔԸ

Առաջ ժամանակով մե խաա քյասիւր տառավ կլլի էնի կունենա մե աղա, անուն Ալեքսան, երկու խաա էլ դաւ: Էդ Ալեքսանի սովորութունն Ի՛նչ էր. հմնօր սարախտան դնեք, իր երկու դադն կասներ շու կարածցուցեր, կրերեր: Մե օր Լլ հեղավ, կախավ թունդի, շղնաց:

Մերն սաց.— Բալա՛ ջան, սիւար օրն հելավ կեսօր, հելի էդ դադերն աար շու:

Տղեն սաց.— Ջայնմուն հչնի, իմ հնդրներ հեսօր կթան քեֆի, դու կասես դադեր սար տախու, շն՛մ էթա:

Մերն աեսավ օր հնարք չկա, սաց.— Օր թար ա, հելի էս մի դադ աար ծախա, դնա քո հնդերներու խես քեֆ էրա:

Ալեքսան հելավ, ուրախ-ուրախ դադու մեկն վերցեց, աարավ բաղառ, օր ծախա: Բաղառով մեկ բոռաց.— Լավ դա՛ղ, լավ դա՛ղ:

Վաճառականները սեկը կանչեց հուր խանութ, սոսաց.—Տղա՛, դադ քանի՞ ա, կասես:

Ալեքսանն ասաց.—Խազե՛ն, դու գիտես, ինչ կտաս՝ տու:

Վաճառական զազն վերցեց, տնտղեց, գրեց գախլի աակ, ձեռն տարավ հետև, բերեց՝ մե՛ սիլա տվեց տղի հերեսին: Ալեքսան լալակթնուկ թողեց հելավ գուս: Գնաց էստեղ, էնտեղ, մի կտոր խաց ճարեց, կերավ, չուրի օր մթնավ, գնաց. տուն:

Մերը ասաց.—Բալա՛ ջան, կերխումդ անուշ հլնի:

Ալեքսան ասեց.—Ադե՛ ջան, սաղ հլնես, լավ կերա-խմեցի:

էն մեկել սարախաան մերն ասեց.—Ալեքսո՛ւն ջան, ղը՛ եկի էս մե դադ բոնե, աար պախա:

Ալեքսան ասաց.—Ջալնմուն հլնի, էն վախա հլա երկու խաա էր, կտանի. մկա էս իմ եքա ջան-գալն առնեմ, հնգնեմ էա մե դադու հետևի՞ց. չե՛մ էթա, հեսօր իմ հնգերներ կէթան ֆռալու:

Մերն տեսավ օր հնարք չկա, Ալեքսանին ա-սաց.—Օր էթար ա, հելի էս մե դադն էլ աար ծախա, գնա՛ քո հնգերներու խեա ֆռա:

Ալեքսանն հելավ դադ վերցեց, գնաց համան վաճառականի մոտ, ասաց.—Լավ, դա՛դ, լավ դա՛դ:

Վաճառական ասաց.—Տղա՛, դադն քանի՞ս կասես:

Տղեն ասաց.—Խազե՛ն, դու դիդես, ի՛նչ կու-տաս՝ տուր:

Վաճառական զազն առավ, դրեց գախլի աակ, ձեռն աարավ, բերեց՝ մե՛ սիլա տվեց տղի հե-րեսին:

Ալեքսան լալակթնուկ դուս եկավ, մե կտոր խաց ճարեց, կերավ, կալնավ իրիշկեց, չուրի վա-ճառական խանութ փակեց: Վաճառական խանութ փակեց, էդ երկու դադն վերցեց, գնաց առնու Ա-լեքսան ընգսով վաճառականի հետևից, դնաց մր-աավ վաճառականի առնու՝ սրախ: Վաճառական յր մսավ տուն, կնգան կանչեց, ասաց.—Կնի՛կ, էս էրկու դադն սարախատան կմորթես, մեկն թաքտ-վորի լայաղի կեփես, մեկն էլ վալիլի լայաղին կէփես, կդնես ոսկե թասի մեշ, արոշումե շորն էլ կքաշես վրեն: Ըս սարախատն խանութի աշ-կերտներուց մեկին կուղարկեմ, կստաս, բերեն:

Ալեքսան էս խոսակցությունն օր լսավ, թո-ղեց հելավ դուս: Սաքախաան, երբ օր մե քիչ արև բանցրցավ, Ալեքսան գնաց վաճառականի տուն, վաճառականի կնգան տաց.—Խանր՛մ, խաղեն կասեր հէրեկվա դադեր, օր տվեր եմ էփելու, եթե հաղը ա թս՝ աա:

Խանրմն հելավ դադերն դրեց ոսկե թասի մեջ, արոշումե շորն էլ քաշեց վրեն, տվեց աղին: Ա-

լեքսանն էլ հելավ դուս. մտածեց. ասեց.—Օր էս ձեկ էթամ տուն, ճամփեն կարող ա ծողովուրց տփեն, ձեռիցս տանն: Լավն էն ա՝ թասն ու շորը գնեմ ծոցս, դադերն էլ բոնեմ ձեռներս, էթամ. Թասն, մեկ էլ շոր գրեց ծոց, դադերու մեկն բոնեց մե ձեռ, մեկն էլ մեկել ձեռ, վաղավ առնու. տվեց մորն ու ասաց.—Ագե՛, բոնա. դադերու մե մաս բերեր եմ:

Թո Ալեքսան զազերն ուտա, մենք խարար տանք վաճառականին: Վաճառականն էլ հելավ. ծառաներուց մեկին օղորկեց տուն, օր դադեր բե-րա, հինքն էլ գնաց թաքավորի ու վաղիրի հե-տևից: Գնաց վաղիրին, մեկ էլ թաքավորին կան-չեց, բերեց խանութ: Էկավ ի՛նչ տեսավ. աեսավ օր ծառան դադեր չրեր: Կանչեց ծառային, կե-լուծյուն հիմցավ, մե թարով թաքավորին, վաղի-րին հարգեց, պաավեց, ճամփու դրեց:

Ալեքսանն էլ դադեր կերավ, հելավ կտավ մոր յախեն, մորն ասաց.—Ընձի մե ձեռք ախկա շոր ճարա:

Մերն էլ հելավ էս հարեանից, էն հարեանից, մե ձեռք ախկա շոր ճարեց, բերեց տվեց աղին: Տղեն շորեր խաքավ, դառցավ մե շտեսնված ախ-չիկ, գնաց մտավ համան վաճառականի խանութ: Վաճառական տեսավ էդ աղջկան՝ աղլիման զնաց, ասաց.—Ախչի՛ ջան, ի՛նչ ա կուղես:

Ախչիկն ասաց.—Ի՛նչ պտի ուղեմ, եկեր եմ օր հիրուր խեռ էթանք Դադնիս, լողկնանք, հիրուր առնենք:

Վաճառականն էլ շտեսով, հելան աղրանք առնողներուն շուտ ճամփու դրեց, ախկան տաց.—Ի՛նչ կուղես, ասա:

Ախչիկն մե քսնի աարեղ լավ դեյրի կտոր վերցեց, մե դալիլ սաղոն, վաճառականի խեա զնաց բաղնիս: Կողկնալու վախտ վաճառականին լավ ափեց, ջանդակ կաղտոցուց, շորեր խաքուց, խանեց դուս, բերեց խալեց բողնու բուշեն, հինք էկավ առնու:

Վաճառականի կնիկ շուտ բանդ հելավ, տե-սավ օր հուր մարթն չկա, հելավ զնաց թաքավո-րին խարար տվեց, օր մարթն չուրի մկա չէկե առնու: Թաքավոր հուր պահակներուն օգորկեց վա-ճառականին շուտ դալու: Պահակներ հէլան բնդան շուտ պալու, էկան տեսնու՝ բաղնիս մոտից մե մար-թու տքոց ա կուքա. լուս վառին տեսնու օր վա-ճառականն ու, վերցին, տարան, տվին վաճառու-կանի կնդան: Սարախատուն լուս բացվելու պես, Ա-լեքսանն հելավ կտավ մոր յախեն, թե.—Ընձի մե ձեռք բժշկի շոր ճարա:

Մերն հելավ բնկավ էս հարեանի, էն հարեա-նի առնու, մե ձեռք բժշկի շոր ճարեց, բերեց տվեց աղին: Ալեքսան շորեր խաքավ, հելավ զնաց վա-

ճառականի դռան մոտով ֆոնացի էդ վախտ վաճառականի կնիք հեղափոխում, տեսավ որ ճամփով լճիկի ա կնիքն, ձեն տվեց բժշկին, բժիշկ հետ դառնալով, խառցուց.— Ի՞նչ ա կասես:

Կնիքն ասաց.— Պարոն բժիշկ, մե խիվանդ ունեմ, էրթանք, տե՛ս:

Բժիշկն ասաց.— Մենակ տենալու խամսուր հարկու մտնեթ փող պաի տաս: Կնիքն ասաց.— Ի՞նչ կույնս՝ կստամ, մենակ արի, տե՛ս:

Բժիշկն մալ նկատ, խիվանդն անալ, առուց.— Եթե կուլես էս խիվանդ լավնա, պաի հիցսն օր ընծի վախտ աաս, քաղաքից էլ դու մե խոտ շենք քրեհես, հիցուն խաա էլ պահակ աաս, օր քո մորթան լավցում, աամ քեզի:

Կնիքն համաձայնվալով, քաղաքից դու մե խաա շենք քրեհես, էրկու ձեռք տեղաշոր աարալ դրեց շենքի մեջ, հիցուն խոքի էլ սալգաթ վերցեց պահակություն նկատ խամսուր: Դե խիվանդն ի՞նչ խիվանդ էր, օր Ալեքսան չկանար սաղցուցեր. հինք ուիեր էր, հինքն էլ պաի լավցուցեր: Խիվանդն սարալ քաղաքից դու, քառսունին օր պախեց, հիցսն քաղաքից օրվա վրեն սալգաթներուն ասաց.— Գացե՛ք վաճառականի կնիքն խաբար տվեք, թո սարախտուն դս, հուր մարդուն սաղ-սալսամթ տանս:

Սալգաթներ եկան քաղաք, զե հիցուն օր հուրտեց աներ չին դադած, հիբար խետ պայմանավորվան, օր սարախտան շուա ժողվենք մեկեաղ, էթանք վաճառականի կնիքն ասենք, օր վաճառական լավցեր ա, դե՛ս բեր:

Թս սալգաթներ էթան հուրտեց փործին, մենք խաբար տանք Ալեքսանից:

Ալեքսանին էլ, օր սալգաթներուն ճամփու դրեց, հեղափոխ մե խաա առծի լուվ սրեց, բերեց վաճառականին մոտեց կտոր-կտոր էրեց, կախեց շենքի պատերուց, աղաշորեր, կառավարներ կապեց հիբարից, շիկեց, դնաց տուն, տվեց մոր:

Սարախտան շուա, բարի լուս բացվալ ձեր վրեն, գուր-գուրում, լաց-կոծ վաճառականի կնիքն, վաճառականի կնիքն էլ հեղափոխ ուրախ-ուրախ գուրադարձեցին վերցեց, դնաց մարթուն բերեցին Գնաց, ինչ սեսալ, օր մարթուն մոթած ա, կտոր-կտոր կախած ա պատերուց: Լուրվ հետ դարձալ, էկտվ թաքսուրին դսա էրեց: Թաքսուր շատ հոստատալ, հեղափոխ դնաց խաղին դուր բացեց, ընդամեն սթ խաա անգին քար ուներ, բերեց ավեց ութ սալգաթի ձեռ, ասաց.— Էս քարեր կասենք, դենք ճամփաներու վրեն, կկայենք. ոն օր էկալ, կղալ վերցեց, կուտաք հոսե՛նք կրեքեք, մեր դողն էնիկ ա:

Սալգաթներ հեղափոխ քարեր վերցին, աարան դրին ճամփաներու վրեն, կայանս: Ալեքսան էկալ,

տեսալ ժողովուրդ բոմած ա. թամաշայա կենն: Մեկից խառցուց. թե.— Էս ի՞նչ պատմություն ա: Ասեցին օր՝ թաքսուր հրաման ա տվե սալգաթներուն, ոն օր էս քարերուց կզի վերցա, էնի թաքսուրի դողն ա, ընդոր կրոնեն, կտանեն:

Ալեքսան դնաց մե ջուխտ քոթոթ շարիս ճարեց, աարալ ճիտեց մաղութի մեջ, խաբալ, էկալ ութ սալգաթի հառեղով հնցալ, ութ անգին քարն էլ դողցալ, դնաց մե խաղաթ աղ ոտներու տկից պոծուց, տարալ ավեց մոր:

Հիբիկուն օր օրը մթնալ, սալգաթներ իբիշկին տեսան՝ անգին քարեր չկա, շուտ դարձացան: Հեղափոխ, շաա տխուր գացին, թաքսուրին եղբուկուն ասացին: Թաքսուր շաա յոստատալ էտ սալգաթներու վրեն, անպատվեց, սալգաթներից աղատեց, կարգադրեց, օր ըտուն բոնեն, թալեն դառնե: Հիբիկուն օր ժողովուրդ քաղաքից խախտեղան, դացին քնան:

Թաքսուր մե խաա սինոյ դալա ուներ, դավեն խանեց թողեց դուս: Դավի սովորությունն էլ էն էր, ոն օր էդ օր դողություն էր էրե, կէթեր, կնստեր եղ մարթու դու:

Գիշերվա մե վախա Ալեքսան քնուց հեղափոխ, մոր խանեց վեր, ասաց.— Աղե, կուլեմ հլենմ դու, բաց շաա ա կվախենամ:

Աղեն ասաց.— Բալա՛ ջան, ինչի՞ յա կվախենաս, լուսնակ դիշեր ա, հեղի, արի: Տղեն մոր շաա դողեց, թե կվախենամ, մենակ չեմ կանա հլեն դու, մերը ստիպված հեղափոխ, աղին տարալ դու: Օր դու բացին, տեսան դավեն շոքուկ ա հուրտեց շեման հառեղ: Մերն ասաց.— Բալա՛ ջան, հլեն էսի ի՞նչ ա, օր կվախենաս:

Տղեն ասաց.— Աղե՛, էսի թաքսուրի սինոյ դավեն ա, սարախտան օր տեսան դավեն մեր յուրն ա, ընծի կղանեն կսպանեն:

Մերն ասաց.— Բալա՛ ջան, իմա՛լ էնենք:

Տղեն ասաց.— Աղե՛, պաի մոտեցնեք:

Ալեքսան բերեց դավեն, մոտեց, տարալ լցեց սան մջի խոր, էկտվ, դինջ քնալ: Սարախտան լուս օր բացվալ, թաքսուր հեղափոխ տեսալ՝ դավեն էլ չկա, հրաման ավեց.— Ոն օր հուր դավու մսից մե կտոր բերա, բերողին հուր կշոռվ մեկ օսկի կուտամ:

Դու մի առա, աղի մորթուր խաբար էր, օր թաքսուրի դավեն հուր քոջ աղա Ալեքսանն ա մոտեց, ասեց.— Հլենմ էթամ, իմ քոջ խափեմ, մե կտոր միս բերեմ սամ թաքսուրին, էդքան օսկի առնեմ. ընդուց հետո ինչ կլնի, թո հլենի:

Ալեքսանն էտ վախտ բաղաո կֆոթեր, բաց հաշկն տան յանն էր. մեկ էլ իբիշկեց տեսալ, օր հուր մորթուր վաղ-վաղ կէթա հուրանց յան:

Տղեն հնցալ կառկածի տակ, ասաց.— Էս

ի՞նչ բան ա, որ հետոք իմ մորքուր գնաց մեր տուն, էսքան վախտ հնչի՞ չէր էթի:

Թո տղեն հուրըն խամտը ֆռա ու մտածա, մենք խարար առնենք տնից: Էրկու քրեր, որ հանգիպան հիրուր, շաա ուրիցան: Ալեքսանի մորքուր հուր քրոշ շատ ստիպեց թե.—Պտի մե քանի կտոր միս աաս, աանեմ՝ խառսն խիվանգ ա, միս ա կուգա:

Քուրն շտվեց, ասեց.—Չունեմ:

Օր շտտ ստիպեց, սիրան մոմոաց, մաավ խորից մե քիշ միս կտրեց, ավեց քրոշ ու թամ-խեց օր հանգարծ Ալեքսանին նշանց չիտա: Ալեքսան մեկ իրիշկեց անսավ, օր մորքուր անից հելավ, կկավ հուրանց ասն յան:

Ալեքսան գնաց հառեշ կտրեց, ասաց.—Մորքուր ջան, էտ ի՞նչ ա թեխտ տտկ: Մորքուրն ասաց.—Հե՛ն, րալա՛ ջան, խարսն շատ խիվանդ ա, հելա գացի մեր էս քամրախ րաղառ, րան չկառցա ճարի, մե քանի խատ քիշմիշ եմ առե, աանեմ խարս շայ խմա:

Ալեքսան ասաց.—Մորքուր ջան, դաթի սիրարս քիշմիշ էր կուգեր, մե երկու իաա աուր՝ թալեմ բերանս:

Մորքուր շտվեց, օր Ալեքսան շաա ղոռեց՝ մորքուրն ասաց.—Ալեքսա՛ն, քեղնից պախեմ՝ ասուց ի՞նչ պախեմ, ձեր անից ա գուքամ, մե էրկու կտոր միս ա կաանեմ:

Ալեքսան ասաց.—Ի՞նչ միս:

Մորքուրն ասաց.—Դավի մսից ա:

Ալեքսան իրիշկեց կող-կուշա, տեսավ՝ մարթ չկա, շաա եոսոսավ մոր վրեն, ասաց.—Քուր եք, րայց քաֆր եք. ես հիրիկուն թաքավորե դավեն մորթի, լցի խոր, ուսող ո՞ն ս, օր էտ մի թիքեն ա տվի: Դառցի էթանք, մե րուղ գնեմ թեխտ սուկ. սուր թո ճժեր ուտեն:

Մորքուր ղառցուց տարավ տուն, մոր վրեն հեռոտտավ, ասաց.—Ես ձեր պես քաֆր քուր չի տես, րա՛ էտ եքա գավի միս ո՞ն ա կուտա, օր ղու րո քրոշ մե թիքա միս ես տվի:

Անրն ասաց.—Րալա՛ ջան, գույն ասած՝ րեգնից եմ վտխեցե, րսոր խամուր քիշ եմ տվի:

Ալեքսան ասաց.—Դո՛ մտի, խորից միս կորա խան, ես մեքիշ իմ մորքուր խեա իռսամ:

Մեր օր մաավ միս խանելու, Ալեքսան մորքուր յախալամիշ էրեց թե՛ պտի լեղուտ խանես պաքեմ: Շաա օր րոտիպեց, մորքուր լեզուն իաանեց, Ալեքսան րերան թալեց լեղուն, քոքանց կտրեց, միս ձեռից առավ, լավ տիեց, տնից խանեց ղուս: Մորքուր լալով, րերնից արուն չալով ղնաց կայնավ թաքավորի դանգաքարի մոտ: Պահտկնեղ ղացին թաքավորին ղլոխ վեր րերին, կայնան, ասին.—Թաքավոր ապրած կենա, մե

կնիկ լալով էկե կայնե գանգտաքարի մոտ. բերնից էլ արուն ա գուգա. կուգա գա քո մոտ. մկա ի՞նչ կտես, թողենք գա՛, թե՛ չէ:

Թաքավոր ասաց.—Գացե՛ք, մե էրկու խատ էլ գուք գարկեք վզին, թո թողա էթա, էս իմ սըրտի փիս վախտ՝ ըտոր գանգատ կնգնի՞ հիրուր:

էտ ձեն գնաց իասավ հուրիշ թաքավորու-թյուն:

Հնցավ մե առամանակ, հուրիշ թաքավորու-թյուններուց անրեհատ ուսմակ ա գուրա էա թաքավորի վրեն, թե՛ ա՛ու իմա՛լ թաքավոր էս, օր մե խատ գող շեա կանա րոնես:

էտ թաքավոր ստիպված հրաման տվեց. «Ոն սր էտ գողություն էրեր ա. ղա պարղ ասա, իմ ախիկ կուտամ հուրին»:

Ալեքսան հիմցավ օր թաքավոր հրաման տավ, հելավ գնաց թաքավորի մոտ, մսիրսմաս ինչ օր ես ձեպի եմ պատմե, հինրն էլ էա հմեն պատմեց թաքավորին:

Թաքավորն ասեց.—Ալեքսա՛ն, եթե էտ հմեն ղու էս էրե, էն վախա ղնա, էս մեր հարեան թաքավորի խողից մե խատ գոնե քար ղողցի րեր, ես օր հտվատամ:

Ալեքսան ասաց.—Թաքավոր, կույես հուրին գողնում րերեմ, րայց մենակ իմ պահանջ պտի րավարարես:

Թաքավորն ասաց.—Քո պահանջն ի՞նչ ա, սուս:

Ալեքսան ասաց.—Ես կուղեմ մե խատ լծու փոսա, օր ամեր մե մուրից մե խատ ղանղուտի կախուկ հչնի:

Րերին էտ փոսան շինեցին, տվին Ալեքսա-նին: Ալեքսան հելավ մե ձեաք խին շոր իաքսով, էտ փոստն ղրեց մեշոկի մեշ, բուրիկ րնկավ ճամ-փա, ղնաց՝ արեմսուց խոստով էտ թաքավորի շենքի մոտ: էտ վախտ, էտ թաքավոր հուր րալ-կոն կայնուկ էր. տեսավ օր րասի րաղա յա, կան-չեց րերեց աուն, խաց տվեց, կերավ, վտուրին կարրաղրեց՝ րուիերիկի մաա ղու թալեն, ինք սա-րախաան թողա էթա: Րերին ղու թալին, աղին տարան քնցուցին, հուրանք էլ ղալին քնան: Գի-շերվա մե վախտ աղեն հիմցավ, տեսավ օր տա-լաաի մողովուրղ րնուկ են, մտով թաքավորի րնե-լու տեղ, տեսավ օր թաքավոր րնուկ ա, յավաշ մեշոկի մից փոստ խտնեց քաշեց ղլոխ, մե խտտ միշվավ, օր վիշվավ՝ ղանղուտկեն քնե տվին:

էտ վախտ թաքավոր ասաց.—Հիսո՛ւս քրիո-տոս:

Տղեն տասց.—Ձարհումա՛ր, սուս մաց, Դաիերի խիշտակն եմ, կկեր եմ րո խորին կտու-նեմ:

Բաքավորն ասաց.— Գաբրիել խրեշտակ ջան, զսնն թող տան օսյաթ Լենն, նոր խորիս առ:

Տղեն առաց.— Զի՛, ոչ մե օռլաթ, արգեն խորիզ կառնեն:

Էս վաղդ տղեն իրիշկեց ակսավ՝ մե խառ ջոջ սնդուկ ա Լտաւղ. բերեց թաքավորին, դրեց ոնդկո մեջ, շալակեց ու շենքից դուռ եկավ դուռ իրանց յերկիր: Յերեկ հասավ ուրանց ժամու մոտ: Գնացին թարավորին առին, յն.— Ալերսան եկեր ա ժամու մոտ, քնդի կկանչա:

Թարավոր հելավ հուր ժողովրդին ժողվեց, եկավ ժամի մոտ: Ալերսան էտ վախտ փոստ քաշեց զլսի, ժխշվավ. որ ժխշվավ՝ թաքավորն տոտոց.— Հիտո՛ւ քրիստոս: Բաքավորն որ ասաց հիտոս քրիստոս, Ալերսան ասաց.— Յա՛, դա՛հըրմո՛ր, մե հաչրերա բաց աեն՝ որտեղ ես:

Էս թարավոր աչրեր բացեց, աեսավ հուրիշ երկիր ա. էս վախտ էս մեկել թաքավոր մոտցավ էս սնդկո մեջ պտուկած թարավորին, առաց.— Տեսա՞ր, էս էլ մեր բաղբի զոդն ա, որ զու ամոթանք կուտիր ընծի, կուտիր, թե ի՞նչ մարդ ես, որ մե զոդ չեռ կանտ բռնե:

Էս թարավորն առաց.— Ապրի՛ էս աեսակ զոդ, ի՞նչ օր խոսք ես տվե, Էրս՛:

Բերին թարավորի աղջկան ալին էս աղին, յոթ օր, յոթ դիշեր խառնիտ էրին, Ալերսանին պառցուցին թարավոր: Բնդսնք խառն հուրանց մուրադին, դար էլ խոսնեք ձեր մուրադին:

31(40). Է Բ Ի Կ

Գլին-չլին, յոթ ախարեր զլին: Էն մեկն ուրստիկ զլին. ջոջ ախարներ դոր կեթան, գրնդնի հեալներ, ընդոնք էլ չեն թողն: Կեթան մե խառ շուլ-չիման աւղ, շալիքն կքաղեն:

Մե խառ զե զուրա (դա զեին էր սլաուկուտում), աղեներուն կառա.— Էղ ի՞նչ ա կէնեք:

Տղեներ կասեն.— Լալ ա կէնենք:

Կառա.— Ձեր մեջ զրադեա չկա՛:

Կառեն.— Զէ՛:

Մե խառ նամակ կգրա, պսախ ախար՝ էրկին, կառա.— Էս նամակ սար, սուր իմ կնդան:

Էրիկ կարթալ դիտեր, ճամփին կկարթա օր՝ զրուկ ա. «Հիրկուն խասի՛ հիրկուն մորթա, ոտրախոտուն խասի՛ ոտրախոտուն մորթա»:

Տղեն նամակն կփխա. «Հիրկուն խասի, բալաք եղ հիրկուն մորթա, ոտրախոտուն խոտի՛ ոտրախոտուն կմորթես, կեփես, կօղորկես»:

Էյ կնիկ եղ կմորթա, կեփա, աղեն կրերա:

Դե կառա.— Էյ ի՞նչ բան ա:

Տղեն կասա.— Էփեր էր, բերի: Հետո քնելու:

վախտ դե յորդան կթալա յոթ քոռ վրեն, կարուկա՛ յոթ ախար. որ ջոկվեն. դիշեր մորթա:

Էրիկ ախարներուն կասա.— Հեղե՛ք փախենք, դե դիշեր մեղ կմորթա: Ախարներ չեն համաձայնվե: Էրիկ զլնի կարպետ կփխա ախարներու վրեկ յորդնի խետ: Դե չիմնալով՝ քրերուն կսպանա, կեթա յոթ օր կքնի:

Էրիկ կասա.— Հեղե՛ք փախենք, դե հելավ, մեկի կսպանա:

Կփախեն ըսեղից կեթան: Էրիկի ջոջ ախար կնախանծի ընդօր դոշաղության վրեն, կուղա դլոխ ուտա:

Կեթա թաքավորի մոտ, կասա.— Դիվուն մե ձի կա, իսկական բոլալաղին ա, էն էլ մինակ էրիկ կանա բերա:

Բաքավոր դժամայա էրիկին, օր ձին բերա: Էրիկ կեթա աենա, ձին դիվու հօդեն կսուլուկ ա: Կիանա ճար, ոտներուն քեշա կկապա, օր ձեն չլին: Դոտան մոտ ձին կիրխնջա: Դե կասա.— Պառա՛վ, էրիկ ձին սարավ:

Էրիկ ձին կթողա, կփախի կմանի փուտերու տակ: Դե զլնի աենա, ձին հուր սեղ կայնուկ ա, ձիուն կտփա, թե հնչի՞ սթից ձեն խանիր: Նրկրորդ անգամ էրիկ ձին կխանա, կիւծնի, նոր ձին ձեն կիւծնա:

Դե կասա.— Նոր աարավ:

Գլնի աենա՝ էրիկ աարավ, կասա.— Կերար շալիքս, բալաք եղս, կերար յոթ քուր, կերար ձիս, իմուն քոնուն թո մնա:

Էլման ախարեր կեթա թարավորի մոտ, կասա.— Բա՛ որ համայիլ բերա՛:

Թաքավոր դժամայա որ բերա:

Կառա. ծոց զրուկ ա, իմա՛լ բերեմ: Ատիպված կեթա, աենա՝ լույս հնցուկ ա, հուշիկ ձեռ կմաու ռիվու ծոց, դե պառվուն կասա.— Պառա՛վ, բո խերն անիծես, հեղի, էրիկ համայիլ տարավ: Էրիկ կփախի: Մեկ էլ զեն սութ քուն կգնա: Հմա՛ էրիկ ձեռ կմոտցու, սր վերցա, զե կրոնա: Կապեն սնից: Սաքախոտան զեն համայիլ կզնա տուն, կնդան կասա.— Էտոր լավ կեփես, որ քրքրվի, զամ՝ ուտեմ:

Կնիկ փուտ կզնա, զաղսն թալա վրեն, էրիկին սնից կհարձկա, կուղա թալա մեջ, էրիկ կասա.— Նանե՛, եռման զլնի, կկոտեմ, հլա աենա:

Կուղա հմա՛ տենա, էրիկ ողառվուն կթալա ջուր, կեփի, խանա փեանրով, կտնդա պտաի հերև: Կառնի համայիլ կտանա, կուտա թարավորին:

Դե դուքա կնդուն կտենա, կասա.— Շան աղի կնիկ էրիկին իմա՛լ ա կերե, աամեներ մաղե դուա: Ձեռ կուտա, պառավ զնդնի, կասա.— Վա՛յ, էրիկ, կերար շալիքս, կերար բալաք եղս, կերար

յոթ քուրս, կերար ձիս, կերար համայիւս, կերար պառակաւս. իմուն քոնուն թո մնաս:

Ախպեր կեթա թաղավորէ մոա, կասա.—Բա՛ որ դիվուն բերա՛:

Վերջ, տղեն սաիպված կեթա, թաքավորից կվերցու մըխ, մե խատ ուրաք, մե խատ սղոց, հուր շորերն էլ կփոխա, կմանի դիվու մեշեն, կշխկշխկցու: Դե գուքա, կասա.—Յա՛, դուշն հուր թեով ըստեղ շեկեր, դու ի՞նչ դործ ունես ըստեղ:

Կասա.—Մե խատ կոտն անիծած էրիկ ա մեռե, կասեն դիվու մեշից դագաղ շինա:

Դե կկորա բետ-բետ ծառներ, տղեն կսարբա, բայց կասա.—Ասես ինչքա՞ն հլնի ընդօր ըոյ: Դե կասա.—Իսկական իմ ըոյին ա, ես կճանշնամ:

Տղեն կասա.—Դ՛ը մե խաա մտի մեջ, աւնամ:

Հմա՛ դե կմանի մեջ, աղեն կմիռնա:

Դե կասա.—Դո՛ր բաց, հլնեմ:

Կասա.—Դո՛ր բացեմ, կո՛ էկեր եմ, քե աւնամ: Ճոպան կթալա, կշլկա, կեթա կղնա թաքավորի հառեղ: Հաշկի տեղ էլ էր թողե, թաքավոր հաշկեր որ կանա, կվախենա, կասա.—Տարե՛ք:

Տղեն կաանա, բնիլին կլցա, կվառա:

Էրկու խնձոր հրնդավ, մեկն ընձի, մեկն էլ քե:

32(41). ՔԱՉԱԼ ՏՂԵՆ

Դեղի, շեղի, մե կնիկ դեղի, ըսոր Քաշալ անվոր աղա դեղի: Էա տղի քառու կնիկ սիրող կէնա, հուր աան լավ ուաւիքներ կվեցու սիրողին, իսկ փշրներ կլին մարդուն: Քաշալի քառին դուքա քորոշ մոտ կպատմա, որ հինքն ինչքան ալուր կբերա, կնիկ կէնա կուա-փշուր:

Քուր կասա.—Ի՛ն քիլի ճաը էնա, Քաշալն կէնա:

Քաշալն քառին կտանա հուրանց տուն:

Էտի դուքա կասա.—Քառու կնիկ, հաշկերս րան շտենա, որ կեթաս ժամ, ասա րաւն հաշկերս րացվի:

Քառու կնիկ կեթա ժամ, Քաշալն էլ ղսխտու կեթա հետեից:

Քառու կնիկ կասա.—Ժա՛մ, ջան, Քաշալու հաշկեր լրիվ բովի, էլ ըսկի րան շտենա:

Քաշալ ցածր կասա.—Բովավ, բովավ, դտա շտենա:

Վալի դուքա սուն, մեկ էլ քառու կնիկ կասա.—Ասեցի ժամուն, հաշկերա կբացվի:

Քաշալ կասա.—Աաղ հլնես:

Մե օր էլ քառու կնիկ հուր սիրողին կրերա աուն, Քաշալուն կասա.—Նստի թունդրա շուրթ:

Հետո եղ կղնա թունդրան շուրթ, կեթա քու, օր գա սիրողին ճաշ էփա: Քաշալ գլնի թունդրա վրեի տայցուկ եղ կլցա քնուկ սիրողի ըերնի մեջ. սիրող, հեսօր էս մեռե, թե վաղ. կմեռնի:

Քառու կնիկ գուքա ճաշ կեփա, կուգա սիրողին խանա վեր. կտենա՝ մեռուկ ա:

Կասա.—Քաշա՛լ, էս ի՞նչ բան ա, մեր հերթսից մե խաա մեռուկ մարթ ա բերած թալած. իմա՛լ էնենք. րա էս ի՞նչ շիվարութեն էր:

Քաշալ կասա.—Քառու կնի՛կ, հաշկերս րացվան, ես կանամ օղնեմ: Քառու կնիկ էա լավ ճաշեր կղնա տղի հառեղ, լա՛վ կուտա:

Քառու կնիկան կասա.—Տե՛ս չիմա թալեմ հերթսից, մի վախեցի:

Քաշալ դիշերվա ժամու 12-ին էղ սիրածին, կառնի կեթա ըտոց դոան կուշտ, կասա.—Դուռ րացեք, ես Ալոն եմ, թե չէ՝ հերթսից ընձի կթալեմ:

Կտանա, վոսղ հերթսից կթալա, կիսիսի:

Սարսխտան կեթան հմեն ժամ, կասեն.—Ախլի՛, Ալոն հուրին հերթսից թալե, դուռ շուա չրացած:

Կնթներուն էլ էտ պիաի:

Լուս օր կրացվի քաշալ քյառու կնիկան կտասա.—Բեր դիշրիա տկրց փոստ կապենք շոքերտ, օր լաս. աաս շոքերտտ, կասեն.—Էս ի՞նչ ջիդերով կնիկ ա, շոքեր ջառթեց:

Քառու կնիկ կեթա մեռի աուն, կսկսա լալ, շոքեր տփել:

Քաշալ կեթա ըտէղ, կասա.—Դոան մոտ մեկտ կայնեք, րան սսեմ. ոչ ներսից դուս էկող հլնի, ոչ էլ դրսից ներս մտնող, րան կասեմ.—Կասա.—Ոն էրեց, ոն չէրեց, փոստով շոքեր կնիկն էրեց:

Քառու կնիկ կասա.—Դենե՛ք, դենե՛ք, ես կեթամ:

— Կասեն,—նսալի-նսալի Գուքան կստուղեն՝ րսուղ կրոնեն: Քաշալն էլ քառուն կալրծու ըսրուց, ներն ընդեղ, բարին կլ րստեղ:

33(42). ԱԿԱՀ ՏԵՐԴԵՐ

Ավալ ժամանակ մե աւրդեր ղլնի, շատ ժլատ, համ էլ աղահ:

Օրերուց մե օր դուկա տիրութնուն կասա.—Տիրութնի, ես կեթամ հուրիշ ալխտր տշխաանմ, րստեղից րան դուս չիղա:

Տիրութնին կուլա խաց սարքա, օր դնա լոեռ, տերղեր հուր ժլատութնունից հուրանց անից իտոյ շվերու, կասա. «Ուրեմ, չկարցա մեկին խափի, խաց սունի, օր անից տանե՛մ»: Անոթի-ծալուլ դընդի ջաղղեն: Շատ կեթա, թե քիչ կեթա, մեկ

էլ հանգճին ձեն կառնի, օր մեկն կբռա.—Տեր-
պէ՛ր, տերղե՛ր, կայնի էթանք:

Տերղեր կկայնի, էտ մարդ դուկա խասի՛, կա-
ռա.—Օրշնա ի տեր:

—Տերղեր կասա,—Ասալած օրշնա:

Տերղեր կխարցու ըտոր.—Խնշ սարթ ես, ղո՞ր
ա կեթաս:

—Կասա,—Ես բժիշկ եմ, կեթամ աշխատե-
լու: Տերղեր՝—Բա ես էլ կեթամ աշխատանք:

Կնդերանան, շարունակեն շաղղեն:

Տերղեր կխառցու.—Խնշ խունար ունես, օր
բժիշկ ես:

